

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ ԱՐՄԵՆ ԽԼՂԱԹՅԱՆԻ 20014
ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հյուրեր, ավագանու անդամներ, համազյուղացիներ.

2014 թվականի ընթացքում Տարոնիկ համայնքում իրականացվել են աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

2014 թվականի ընթացքում Տարոնիկ գյուղապետարանը իրականացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունած որոշումները զգալի աշխատանքներ է իրականացրել՝ համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող լուծման համար: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման հարցերը: Համայնքի փողոցներում ամենօրյա գրաֆիկով կազմակերպվում է աղբահանություն պահպանելով համայնքի սանիտարահիգիենիկ նորմերը: Հաշվետու տարին սկսել ենք Հունվարի 28- ին Բանակի օրվան և Փետրվարի 23-ին Տղամարդկանց օրվան նվիրված միջոցառումներով – որոնց ներկա են եղել համայնքից ՀՀ բանակում ծառայող զինվորների ծնողներ , դպրոցի ուսուցչական կոլեկտիվը և գյուղապետարանի աշխատակիցներ: Փետրվար ամսին ամբողջովին վերանորոգվել է համայնքի փողոցային լուսավորության ցանցը և փոխարինվել է նոր լապտերներով:

Մարտի 8-ի կապակցությամբ գյուղապետարանի, դպրոցի և մանկապարտեզի բոլոր կին աշխատողներին հանձնվել են նվերներ և ծաղկեփնջեր:

Բոլորիս համար ավանդույթ դարձած վերջին զանգի օրվա առթիվ ինչպես անցած տարիների ընթացքում այնպես էլ այս տարի մեր շրջանավարտները և ուսուցիչները եղան գյուղապետարանի ուշադրության կենտրոնում՝ նրանց համար կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ ավաշտական երեկո , էքսկուրսիա Հայաստանի տեսարժան վայրեր: Հունիսի 1-ին Երեխաների Պաշտպանության

Միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում համայնքի բոլոր փոքր երեխաների մասնակցությամբ:

- Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվում է ամենօրյա ընդունելություն:
- 20014թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանու կողմից կայացել է թվով երեք նիստ, որոնց որոշումները հաստատվել են առանց առարկումների:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 19 որոշում և արձակվել է 6 կարգադրություն:
- Համայնքի բնակչությանը գյուղապետարանի կողմից տրամադրվել է թվով 398բազմաբնույթ տեղեկանքներ:
- Ստացվել է 91 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի:
- Գյուղապետարանից ուղարկվել է 82 պաշտոնական գրություն:
- Ստացվել է 14 դիմում, որոնք քննարկվել են և ստացել համապատասխան լուծում:
- Պարբերաբար կազմակերպվում է համայնքի հանրային սննդի և առևտրային կետերում ստուգումներ, որոնք համապատասխան եզրակացություններով, կից գրությունով ամեն եռամսյակ ուղղարկվում է մարզպետարան:
- Համայնքի ղեկավարին է դիմել համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոմոունալ հարցերով և ստացել բավարար պատասխաններ իրենց հուզող հարցերի շուրջ:
- Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 17 անձից որոնցից ութը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ:
- Գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզը 2014թ. 2ի գործում շենքի վթարային լինելու պատճառով:
- Համայնքը ունի գրադարան 4290 կտոր գրականությամբ, որից օգտվում են 380 ընթերցողներ:

Ֆինանսական բաժին – 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վճարվել է 8826,1հզ դրամ աշխատավարձ:

Համայնքի առավել անապահով բնակիչներին տրամադրվել է սոց. օգնություն 1045.0 հզ դրամ: Սպորտ և երիտասարդական ծրագրեր հողվածից ծախսվել է 2305,7հզ դրամ:

Կատարվել են այլ ծախսեր ապարատի պահպանման, ապրանքների գնման և ծառայությունների ձեռք բերման համար 8408,7 հզ դրամի չափով:

2014 թվականի համար հողի հարկը նախատեսվել է 4500.0, հզ դրամ որից հավաքագրվել է 2400.0 հզ դրամ 53 %, գույքահարկը նախատեսվել է 2675.0, հզ դրամ որից հավաքագրվել է 2863,5 հզ դրամ՝ 107.8 % , վարձակալական հողի հարկը նախատեսվել է 200.0 հզ դրամ որից հավաքագրվել է 27.5 հզ դրամ՝ 14 %: Սկսվել է կուլտուրայի այրված տան առավել պահպանված երկու սենյակների վերանորոգման աշխատանքները, տարվում են աշխատանքներ գյուղապետարանի շենքի վերանորոգումը ավարտելու համար: